№ 10 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20 **1893** ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20 № 10

ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական անտարբերութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Արդարութիւնը ամենից առաջ. Հայոց թատրոն. Նամակ Էջմիածնից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Անգլո-ռուսական ազդեցութիւնը Պարսկաստանում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Նամակ Թիւրքիայից.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

—

Դժուար կարելի է մտաբերել մեր հասարակական կեանքում մի ուրիշ րոպէ, երբ մարդիկ յայտնած լինեն այնքան խոսքեր և բազմակողմանի ցանկութիւններ և մի և նոյն ժամանակ այնքան քիչ փորձեր արած լինեն իրականացնելու այդ ցանկութիւնները կեանքի մէջ:

Մի սարսափելի յոգնածութիւն, մի պախարակելի ծուլութիւն, մի աննեղելի անտարբերութիւն է տիրել ամենքին ընդհանրապէս: Մարդիկ կորցրել են իրանց աշխոյժն ու եռանդը և գործին դիմելու կամքի ոյժը:

Ցնցում էք մարդկանց, յանդիմանում էք նրանց անտարբերութեան համար, յորդոր էք կարդում սթափվելու, սկսած գործերը շարունակելու, ստանձնած պարտաւորութիւնները կատարելու: Ձեզ լսում են, ծոյլ-ծոյլ վիճում են, ձեզ հետ համաձայնվում են, խոստումներ են տալիս և մի քանի յօրանջումից յետոյ նորից ընկնում են նոյն թմրութեան մէջ:

Դանդատներ, անվերջ դանդատներ են գալիս ամէն օր զանազան տեղերից, քաղաքներից և գիւղերից, դանդատներ ընդհանուր անտարբերութեան և մեռելութեան մասին:

Այն փոքրաթիւ ոյժերը, որ կուլ չեն գնացել ընդհանուր թմրութեան մէջ, որոնց մէջ չէ բթացել գործունէութեան մղող խթանը, զգում են իրանց խեղդող և հեղձուցիչ մթնոլորտի մէջ և օգնութեան աղաղակ են կանչում: Նրանք վախենում են, որ մի գուցէ իրանք ևս յուսահատվեն այդ երկար շարունակվող ընդհանուր մեռելութիւնից և ընկնեն անհաւասար մաքառումի մէջ:

Այսպիսի ժամանակներում մի ողբերգական դրութիւն է ստեղծվում այն հիմնարկութիւնների համար, որոնց գոյութիւնը և բարգաւաճումը մեծ կախումն ունի հասարակութեան ջերմ մասնակցութիւնից: Որչափ մեծ լինէր անգամ այդ հիմնարկութիւնների գործավարների կողմից աշխատելու պատրաստականութիւնը, այնու ամենայնիւ նրանց ջանքերը կը մնան ապարդիւն, ջարդվելով և փշրվելով ընդհանուր անտարբերութեան ժայռաքարի ծանրութեան տակ:

Եթէ օրինակներ են հարկաւոր, կանգ առնենք Թիֆլիսում գոյութիւն ունեցող հասարակական հիմնարկութիւնների վրա:

Կովկասեան բարեգործական ընկերութիւնը խօլերայի դէմ մաքառելու համար հինգ հազար բուբլի է ծախսում, Ղարսի ժողովրդին օգնելու մի հազար և Բաթումի դպրոցի շինութեան համար երեք հազար բուբլի փող է ուղարկում փոխարինաբար, օգնում է դպրոցներին, աշակերտներին, տառապեալներին և սպասում է, թէ ահա հասարակութիւնը կը գնահատի բարոյապէս այդ բոլորը և կը բերի իր կողմից առատ նպաստներ. բայց անցնում են ամիսներ և տարիներ և ոչ ոք չէ մտածում մի որ և է ձևով աջակցել այդ ընկերութեան: Իսկ ամենայն մի նիստին տեսէք, որչափ աղերսողներ, գլխակոր որբեր և անօգնական այրիներ, աղքատ աշակերտներ և ուսումնածարաւ գաւառացի պատանիներ լցվել են ատեանի գաւիթը և սպասում են հոգացող պաշտպանութեան:

Հայուհեաց ընկերութիւնը, որ արհեստ է սովորեցնում հայ աղջկան՝ նրա ձեռքը տալով նիւթական ապահովութեան և անկախութեան զէնք—ի՞նչքան զգալի խրախոյսներ է ստանում հասարակութիւնից: Շատ քիչ: Եւ ընկերութիւնը չէ կարողանում պարզել իր թևերը մեծ գործունէութեան համար:

Հրատարակչական ընկերութիւնը, որ աւելի բաղդաւորն է իր անդամների թուով, դարձեալ բաւականաչափ չէ խրախուսվում հասարակութեան նուիրաբերութիւններով, նպաստներով, որ կարողանայ երկպատկել, եռապատկել իր տարեկան ծախսագումարը: Մինչդեռ համարեա ամէն շաբաթ ընկերութեան վարչութիւնը ստանում է զանազան կողմերից նամակներ, որոնց մէջ նամակագիրները խնդրում են ուղարկել իրանց՝ ընկերութեան գրքերը կամ ձրի, կամ կիսագին և կամ խորհուրդներ են գրում ընկերութեան գրքերը էժան գներով տարածել ժողովրդի մէջ: Իսկ այդ ընկերութեանը օգնելու մասին—շատ քիչ ջանք և մասնակցութիւն են ցոյց տալիս իրանց կողմից:

Ներկայ թատրոնական մասնաժողովը, ինչպէս յայտնի է, բաւականին ջանք է գործադրել և նիւթական զոհաբերութիւն է յանձն առել կազմակերպելու թատրոնական գործը, հրաւիրել է բաւական աջող խումբ, որի հետ միասին գործ է դնում իր բոլոր ճիգը հասարակութիւն գրաւելու դէպի թատրոնական դահլիճը: Բայց ժողովուրդ չէ գալիս ու չէ գալիս: Ուրիշ բան է, եթէ հասարակութիւնը իր սառն վերաբերմունքը բացատրէր գործի անկանոն, անկարգ և անբաւարար վիճակով, բայց այդ չը կայ. նա չէ ուզում նոյն իսկ քննադատել իր վարմունքը:

Օրինակների թիւը կարելի է այսպէս երկար շարունակել: Ի՞նչով կարելի է սակայն բացատրել այս ընդհանուր սառնութիւնը:

Մեր հասարակութիւնը երբէք չէ եղել աչքի ընկնելու չափ գործունեայ, նա մէկմէկ ոգևորվել է այս ու այն առիթով և դարձեալ հանգստացել՝ մի յայտնի ջերմութիւն միայն պահպանելով դէպի ընդհանրական գործը: Նա միշտ կարօտ է եղել արթնացնողների, խթանների, քարոզիչների և դրդիչների: Երբ դրանք պակասել են—կեանքը սկսել է ճահճանալ և խեղդվել:

Իսկ մեր երկրի՝ անդորրութիւն և անշարժութիւն երգող ինքնաբոյս չինացիները—ուրախացան և սկսեցին իրանց անվերջ օրօրները:

Ի՞նչ է մնում անել:

Թող այն ոյժերը, որոնց մէջ կենդանի է գործունէութեան ոգին, աւելացնեն մէկին երկու իրանց եռանդը, շարժեն իրանց շրջապատող հասարակութիւնը, կեանք և յոյս ներշնչելով նրա մէջ և հաւատ դէպի հասարակական առաջադիմութեան գործը:

ընդհանուր, տեղական երևոյթ, որի վրա հարկաւոր ենք համարում մի երկու խօսքով կանգ առնել:

Վերցնենք մի դէպք.

Ուսուցիչը հրաւիրվում է մի ամբողջ տարով: Դեռ ուսումնական տարվայ սկզբին, այն է հոկտեմբերին՝ ուսումնարանի վարչութիւնը անյարմար գտնելով նրան (դա ճաշակի բան է), առաջարկում է նրան հեռանալ: Լաւ: Անմիջապէս ծագում է մի խնդիր. տալ, թէ չը տալ արձակված ուսուցչին ամբողջ տարվայ ռոճիկը: Ինքն արձակված ուսուցիչը պահանջում է, որովհետև՝ նախ հրաւիրված է եղել ամբողջ տարով, և երկրորդ՝ նիւթական ոչինչ միջոց չունի:

Ուսումնարանի վարչութիւնը, տարաբաղդաբար, դժուարանում է միանգամից վճռել այդ պարզ խնդիրը. մի օր որոշում են տալ, միւս օրը մերժում են. երրորդ օրը նորից որոշում են տալ, բայց միայն ամսէ ամիս, և չորրորդ օրը՝ նորից քննդում են այդ որոշումը, ասելով թէ չը պէտք է տալ, և առաջարկում են արձակված և օգնութեան կարօտ ուսուցչին բաւականանալ միայն մի ամսվայ ռոճիկով, իսկ միւս ամիսը՝ օդով ապրել....

Իսկ միւս կողմից, արձակված ուսուցիչը պնդում է, որ ինքը ձեռք չի քաշի իր իրաւունքից, չի հրաժարվի իր տարեկան վարձից և կը դիմի դատարանին՝ իր իրաւունքը պաշտպանելու համար: Եւ եթէ դպրոցի վարչութիւնը, աղգի փողերը խնայելու պատրուակով, չի վճարի արձակված ուսուցչին նրա ռոճիկը, ինչ կասկած, որ դատարանը կը ստիպի վճարել.... Իսկ դատարանին դիմելը, ինչպէս շատ անգամ պատահել է, գրգռում է մեր սագերին: «Ինչպէս, հայը հայոց դպրոցի դէմ դանդատ տայ. դատարանին դիմի. —դա ամներելի յանցանք է, դա մատնութիւն է, դա խայտառակութիւն է», ասում են շատերը, և այդ էլ միայն նրանք, որոնք առաւօտից մինչև երեկոյ կամ եկեղեցու, կամ որ և է դպրոցի փողեր են մաքրաղարդում:

Սակայն, ասեցէք խնդրեմ, ինչ անի խեղճ ուսուցիչը, որ քարին տայ գլուխը, ուամ դիմի, քանի՞ տարի սպասի: Եւ միթէ կարծում էք, որ մեր յիշատակած դէպքը առաջինն է, կամ վերջինը. ոչ, նա մինն է հարիւրներից, հազարներից:

Փաստեր էք ուզում ահա.—Թիֆլիսի թեմի միջոցում վարժուհին ծառայում էր տարեկան 400 բուբլով: Տարվայ վերջը նա միայն ստացել է այդ գումարից 95 ր., իսկ մնացած 305 բուբլին

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ

—

Տարվայ կէսին ուսուցիչ արձակելու և ռոճիկ չը տալու դէպքը մի մասնաւոր, պատահական դէպք չէ հայոց դպրոցական կեանքի մէջ, այլ մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, Նոյեմբերի 5-ին

Սեպտեմբերի 26-ին, կիրակի, Վարագայ Խաչի տօնի օրը, Կ. Պոլսի բոլոր եկեղեցիները ահագին ժողովուրդ լեցուած է եղեր, ամէն դասէ, հասակէ և սեռէ. մեծկակ թիւը գաւառացի պանդուխտները կը կազմէին: Մայր եկեղեցին ասեղ ձգելիր՝ վայր չէր իյնար: Քահանայք կրսեն, որ երբէք այս աւուր չափ բազմութիւն անցեալի մէջ չեն յիշեր. Զատկի և Ծնունդի օրերու պէս ժողովուրդ լեցուած էր անխտիր Պոլսի բոլոր եկեղեցիներու մէջ: Եկեղեցիներու մէջ ժողովուրդի այս արտասովոր բազմութեամբ ներկայութիւնը առանց պատճառի չէր: Հայ թերթերը շաբաթ մը առաջ հրատարակած էին, որ սեպտեմբերի 6-ին, Վարագայ Խաչի կիրակին, Էջմիածնի մէջ կը կատարուի Կաթողիկոսի օծումը, առանց անունը յիշելու: Կ. Պոլսի թերթերուն կառավարութիւնը արգելած էր Հայրիկի անունը տալ և ցարդ ալ այդ արգելքը կը շարունակի: Թերթերէն հայ ժողովուրդը իմացած ըլլալով, որ այդ օրը իրենց սիրեցեալ Հայրիկը պիտի օծուի, լեցուած էին եկեղեցիները՝ հոգով, մտքով մասնակցելու օծման հանդիսին:

Սեպտեմբերի 26-ին հանդերձեալ էին պատարագ մատուցանելու՝ Իզմիրեան, Մուրադեան, Ալէքսիանեան եպիսկոպոսները և այլք: Ցիշեալ եպիսկոպոսները և ուրիշ շատեր քարոզ խօսած են այդ օր. նախ բացատրած են Վարագայ Խաչի տօնը և եղբը Վարագայ վանքի վանահայր, այժմ կաթողիկոս Հայրիկի օծման, Ս. Աթոռի մասին խօսած են և երկար կեանք մաղթած են վասն կենաց Հայրիկի: Ժողովուրդը սրտաբուղխ և բարձրաձայն «ամէն»-ով մասնակցած է քարոզիչներու բարեմաղթութիւններուն և գոհ սրտով մեկնած է եկեղեցիներէն:

Ժողովրդի մէջ ընդհանուր յուզում և զայրոյթ կը տիրէր երկու պատրիարքներու (Երուսաղէմի Ցարութիւն պատրիարքն ալ հոս է և Երուսաղէմեան, ուր կը բնակի, մինչև Մայր եկեղեցին երեք քայլ է) դէմ, որոնք այդ օրը դիտամիտ ոչ եկեղեցի եկած էին և ոչ ալ արտօնած Կաթողիկոսի օծման մասին քարոզ խօսել մայր եկեղեցիի մէջ:

Աչքդեան, որուն կառավարութիւնը 200 ոսկի տալով, հիւանդութեան պատրուակաւ Եալովայի ջրերը խաւրած էր, ապացուցելու համար, որ պատրիարքի հրաժարականը պարզ հիւանդութիւն է և ոչ կառավարութենէն ունեցած դժգոհութիւն է կամ հայաբնակ գաւառներու մէջ տիրող գէշ վիճակն ու առանձնաշնորհմանց խնդիրը, սեպտեմբեր 23-ին արդէն վերադարձած էր ողջ առողջ, ինչպէս ողջ առողջ դացած էր և կը հանդիպէր Մաքրիգիւղ իր սեպհական ապարանքին մէջ:

Պատրիարքներու դէմ այդ զայրոյթն ալ չափն անցաւ, երբ լսեց, որ Ցարութիւն պատրիարքն ոչ միայն ներկայ գտնված էր այդ աւուր կէսօրէն եղբը Մայր եկեղեցիի մէջ կատարուած շրջանաւարտներու պարգևաբաշխութեան հանդիսին, այլ և երկար քարոզ մը խօսած է թիւրքերէն, դրուատելով սուլթանի և թիւրք կառավարութեան հայրական խնամքներն ու հոգածութիւնն առ հայոց ազգն, հայ եկեղեցին, որու բարձր հովանիին ներքև հայ ազգը կաճի, կուռճանայ, անտեսապէս, բարոյապէս ու մտաւորապէս կը յառաջադիմէ ու կը զարգանայ և դիմելով առանձնապէս կիներուն կըսէ. «Զանացէք գիշեր ու ցորեկ ձեր կաթին հետ ներշնչել ձեր զաւակներու մէջ երախտագիտութեան, հաւատարմութեան և հպատակութեան զգացումներ առ օսմանեան փառապանծ գահն և առ օգոստափառ սուլթանն»:

—

Քանի մը ամսէ ի վեր գաւառներէն շատ գէշ լուրեր կը ստացուին. մէկ երկու տարու, մանաւանդ այս տարու ընդհանուր երաշտութիւնը, տեղ տեղ ալ մարախն ու մուկերը մեծապէս վնասել են այս տարու ցանքերը: Մուշի մարախը այս տարի այնչափ վտանգաւոր չեղաւ, վասն զի ցանքերու հասած ատենը երևցաւ, բայց յառաջիկայ տարուայ համար վտանգը ահռելի պիտի ըլլայ, եթէ մարախներու դրած մեծաքանակ հաւկիթները չոչնչացուին ժամանակին:

Երկրագործ դասը տատանորդը, պարտքերը վճարելէն ետքը հազիւ մի երկու ամսու հաց ունեցաւ, ալ սերմացուի մասին մի հարցնէք: Գաւառներու ցանքը մեծաւ մասամբ աշնանացան է, գառնանացանը շատ քիչ է, և ցորենը մեծաւ մասամբ աշունը կը ցանեն, որպէս զի ժամանակին հասնի, օդի ցրտութեան պատճառաւ: Սերմացուի պակասութեան պատճառաւ, ստացուած տեղեկութիւններուն նայելով, ամէն տարու համեմատութեամբ հազիւ $^1/_3$ մասը ցանուած է, $^2/_3$-ը սերմացուի պակասութեան պատճառաւ առանց ցանուելու մնացած: Բաբերդ, Երզնկա, Կարին, Մուշ հացի սղութիւնը ահագին չափեր առած է: Սղութեանը մասամբ ալ նպաստեցին երկրի թիւրք և հայ վաչխառուները, որոնք հարստանալու տենչով բռնուած, տենդային արագութեամբ, երկրի մէջ գտնուած հացը ամբարեցին իրենց ձեռքի տակ, ապագային սուղ գնով ծախելու համար: Անհեռատես ռանճպարը ոսկիի փայլէն ու մեծ գնէն հրապուրուած՝ ունեցած ցորենը ձեռքէն հանեց և այժմ իր սև օրը կուլայ: Հացը սովորա-

մինչև այսօր էլ չէ ստացել, չը նայած որ և հոգաբարձունների չէմքերն է մաշել, և թեմական տեսչի, և թեմական առաջնորդի, և նոյն իսկ Էջմիածին է դիմել։

Մի ուրիշ փաստ։ Հայաբնակ մի մեծ քաղաքում (եթէ հարկ լինի անունը կը տանք) ուսուցիչները երեք-չորս ամսով ռոճիկ չեն ստանում, չը նայած իրանց աղերսանքներին, և տիպված են համարեա մուրացկանութիւն անել՝ իրանց և իրանց ընտանիքի գլուխը պահելու համար։—Իսկ այդ հայաբնակ քաղաքի դէպքը կրկնվում է ամեն մի քաղաքում, և համարեա բոլոր գիւղերում։

Մի ուրիշ տեղ ուսուցիչը, ուսումնական տարվայ վերջին՝ հեռանում է դպրոցից և ուրիշ տեղ վարձվում։ անցնում են ամիսներ, և նոյն իսկ տարին, բայց նախկին դպրոցը չէ վճարում նրա վարձը, և ականջ էլ չէ դնում խեղճի խնդիրներին և յուսահատ սպառնալիքներին...

Արդ, հարցնում ենք, ինչ միջոցով կուել այդ ընդհանուր, սովորական դարձած երևոյթի դէմ. խնդրում էք՝ չեն տալիս. աղաչում էք՝ ականջներն են փակում. սպառնում էք՝ ծիծաղում են. իշխանութեանն էք դիմում՝ ամիսներով քնացնում են և օրօր կարդում... Դէհ, ասեցէք, ո՞ր ջուրն ընկնի վարժապետը, ում դիմի վարժուհին, այդ սանձարձակ անարդարութեան, այդ աղայական կամայականութեան, այդ անարդար, անօրէն վարմունքի դէմ բողոքելու համար։

Եւ ինչպէս զսպի իրան ու դատարանին չը դիմի հարստահարված, հալածված, ծաղրի առարկայ դարձած վարժապետը, քանի որ նա լաւ տեսնում է, թէ այն փողերը, որ իբրև թէ ինայում են «յօդուտ ազգի և եկեղեցու», կուլ են գնում սուտ—ճշնաւորների փորը, և չցնում սրա նրա գրպանները...

Ուրիշ ելք չը կայ, բայց եթէ դատարանին դիմել։ Արդարութիւնը ամենից առաջ։

Եւ եթէ մեր դպրոցական հիմնարկութիւնները, սկսած ամենաբարձր հիմնարկութիւնից մինչև վերջին գիւղական դպրոցը, չեն կամենում որ ղրկվածները դատի դիմեն և չեն ուզում, որ դատարանը սովորեցնի իրանց մի այնպիսի պարզ ճշմարտութիւն՝ ինչպիսին է մարդկանց աշխատանքը վարձատրել,—թող գործը դատարանին չը հասցնեն, և իրանց պարտքը հասկանան...

Խ. Մ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Գերմանացի դրամատուրգ Զուդերմանի մի նոր պիէսան, որ գերմաներէն կրում է «Heimath» անունը, մեր բեմի վրա առաջին անգամ ներկայացվեց Նոյեմբերի 18-ին, «Հայրենիք» անունով։ Գուցէ շատերը թատրոն գնացին հէնց այն պատճառով, որ տեսնեն, թէ արդեօք օտարներն էլ՝ մեզ պէս կարդօնի սրերով են պաշպանում և վքունխօսքերով սիրում իրանց հայրենիքը, թէ մի այլ կերպ.—սակայն ոչ մի այդպիսի բան չը տեսան Զուդերմանի պիէսայում։ Հայ թարգմանիչը, տգիտութեամբ թէ սխալմամբ, գերմաներէն «Heimath» բառը թարգմանել է «Հայրենիք», մինչդեռ պէտք է թարգմանել «Ծննդավայր», որը թէ աւելի ճիշդ և թէ պիէսի բովանդակութեան յարմար կը լինէր։

Ինչ և իցէ. անցնենք բովանդակութեան։ Գերմանական մի գաւառական քաղաքում, պաշտօնաթող գնդապետ Շվարցէ, մի հին, հաստատակամ, և մի և նոյն ժամանակ մեծամիտ և ինքնահաւան ծերունի ունի երկու աղջիկ, մէկի անունը Մարի, միւսինը՝ Մագդա։ Առաջինը՝ մի Աստուծու գառը, միւսը՝ Մագդան, մի համարձակ, բողոքող, նոյն իսկ յանդուգն ընաւորութեան տէր, որը ամեն մի քայլափոխում դիմադրում է հօրը։

Խստաբարոյ զինուորականին կատաղեցնում է աղջկայ այդ ուղղութիւնը։ Կատաղութիւնը հասնում է իր գագաթնակէտին, երբ Մագդան, հակառակ հօր կամքի, չէ ուզում ամուսնանալ պատօրի հետ, որը խնդրում է նրա ձեռքը։ Կատաղած հայրը, անկարող լինելով տանել սանձարձակ անհնազանդութիւնը, դուրս է շպրտում Մագդային հայրական օջախից։

Անցնում են շատ տարիներ։ Մի օր այն քաղաքում, ուր ապրում է Շվարցէ, լուր է տարածվում, որ եկել է հռչակաւոր մի իտալացի երգչուհի։ Ամբողջ քաղաքը երգչուհու մասին է խօսում։ Եւ յանկարծ, ինչպէս հրաշք, յայտնվում է, որ այդ աշխարհահռչակ երգչուհին՝ Մագդան է։ Սկսվում է մի սարսափելի դրամա Շվարցէի տանը.—պատօրը համոզում է ծերունի հօրը՝ մոռանալ անցեալը և ընդունել աղջկան իր տանը։ Ծերունին վերջ ի վերջոյ համաձայնվում է։ Մագդան բաց է անում պատօրի առաջ իր անցեալը, որից երևում է, թէ այդ հալածված, անպաշտպան աղջիկը ահագին տանջանքներ է կրել, օրերով քաղցած է մնացել, մինչև որ հասել է շլացնող հռչակին և փառքին։

Եւ երբ խստաբարոյ հայրը արդէն պէտք է բոլորովին հաշտվէր աղջկայ հետ, յանկարծ բացվում է մի նոր եղեռնագործութիւն։ Յայտնվում է, որ Մագդան կոյս աղջիկ չէ, այլ արդէն նոյն իսկ մի երեխայ ունի, և այդ երեխայի հայրն է խորհրդական բարոն Ֆօն-Կելլէր, մի անհոգի, լկտի, կարիերիստ արարած, որը մի ժամանակ ճանապարհից շեղել է անօգնական աղջկան, բայց երբ ծնվեց երեխան—երեսի վրա շպրտեց և հեռացաւ...

Ծերունի Շվարցէ ստիպում է Ֆօն-Կելլէրին ամուսնանալ իր աղջկայ հետ։ Նա համաձայնվում է։ Մագդան, որը սկզբում լսել անգամ չէր ուզում, նոյնպէս համաձայնվում է։ Բայց երբ նոյն Ֆօն-Կելլէրը պահանջում է, որ իրանց ապօրինի երեխան իրանց հետ չապրի և ծածուկ մնայ, մայրական սիրտը տակն ու վրա է լինում, և կատաղած մայրը իր հոգու ամբողջ զօրութեամբ սկսում է ատել իր որդու անարժան հօրը։ Սակայն ծերունի զինուորականը լսել անգամ չէ ուզում աղջկայ խօսքերը։ Նա միմիայն մի բան է պահանջում,—ամուսնանալ Ֆօն-Կելլէրի հետ։ Սկսվում է մի կատաղի կռիւ հօր և աղջկայ մէջ։ Եւ երբ յուսահատ աղջիկը, այլ ևս չը դիմանալով հօր բռնաւոր պահանջներին, բացականչում է՝ «Բայց դուք հաւատացած էք, որ ես միայն Ֆօն-Կելլէրին եմ պատկանել», ծերունին այլ ևս չը տանելով այդ ծայրահեղ խայտառակութիւնը, ատրճանակը ուղղում է աղջկայ կրծքին,—բայց իսկոյն ինքն կաթուածահար է լինում և տեղն ու տեղը մեռնում։

Զուդերմանի այդ պիէսի մի քանի տիպերը մեծ նմանութիւն ունեն նոյն հեղինակի «Պատիւ» պիէսի տիպերին։ Զինուորական Շվարցէ, որը առաւօտից մինչև երեկոյ բողոքում է նոր բարքերի և նոր մտքերի դէմ, յիշեցնում է ծերունի Հեյնիկէին։ Սառն, անձնուէր, բարոյախօս պատօրը յիշեցնում է կոմս Տրաստին։ Իսկ Մագդան ոչ այլ ինչ է, եթէ ոչ «Պատիւ» հերոսուհու՝ Ալմայի շարունակութիւնը։

Պիէսի գլխաւոր հերոսների՝ Շվարցէի և Մագդայի կռիւը՝ հասարակական հակացողութիւնների կռիւ է։ Առաջինը ներկայացուցիչ է հին հակացողութիւնների, երկրորդը՝ նոր։ Աղջիկը բողոքում է հօր կամայականութեան, ընտանիքի բռնութեան դէմ, և անձնական ազատութիւնը պաշտպանում. իսկ հայրը բողոքում է աղջկայ և դրա հետ միասին ամբողջ աշխարհի դէմ, գոչելով. «ընդհանուր բարոյական ապստամբութիւն է սկված ամեն տեղ. այն՝ ինչ երէկ յանցանք էր համարվում, այսօր օրէնք է դարձել»։

Ընդհանրապէս ասելով՝ խաղը շատ էլ կենդանի չանցաւ։ Մի ամբողջ տարի է մենք թատրոնում չենք եղել, և մեզ թվաց, թէ մեր դերասանները և դերասանուհիները համարեա ոչինչ առաջադիմութիւն չեն արել։ Մի ինչ որ թմրութիւն է տիրում նրանց բոլորի վրա.—արդեօք դրա պատճառը թատրոնի դատարկութիւնը և հասարակութեան անտարբերութիւնն է, թէ մի այլ բան,—մենք այդ պարզել չենք կարող։

Տիկին Հրաչեայ, որ լաւ էր ըմբռնել Մագդայի դերը, տարաբաղդաբար չէր կարողանում իր ցանկացած տպաւորութիւնը թողնել, և այդ միայն այն պատճառով, որ բոլորովին կորցրել է իր ձայնը։ Պ. Աբելեան (Շվարցէ) վերջին երկու գործողութեան մէջ գեղեցիկ խաղաց. նոյնը կարող ենք ասել պ. Պետրոսեանի մասին, որ կատարում էր պատօրի դերը։ Պ. Արաքսեանի խաղը մեզ վրա լաւ տպաւորութիւն չը թողեց, որովհետև բարոն Ֆօն-Կելլէրից նա չունել էր մի ռուս կուպչիկ (նա հրաշալի կը լինէր, եթէ տիպը ճիշդ որ կուպչիկի տիպ լինէր)։ Մնացած անանուն դերերը՝ միջակ կերպով կատարվեցին։

Զուդերմանը, որի «Պատիւ» և «Ծննդավայր» պիէսները արդէն հայերէն թարգմանված են, ունի և մի ուրիշ յայտնի պիէս՝ «Սօդոմի կործանումը»։ Մենք չենք կարդացել այդ պիէսը. խորհուրդ ենք տալիս թարգմանիչներին կարդալ և եթէ յարմար է՝ թարգմանել, որպէս զի Զուդերմանի համակրելի գրուածքների շարքում, մենք այդ էլ ունենանք։

*

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Նոյեմբերի 12-ին

Հինգշաբթի, ամսիս 12-ին, Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց սինօդ գալ և այն էլ առաւօտն այնքան վաղ, որ սինօդականները դեռ հաւաքված չէին։ Էջմիածին հասած օրից Վեհափառը հոգսերի առարկան էր դարձել մեր թեմերից և յաջորդութիւններից շատերի թափուր մնալը։ Սակայն պատասխանատու պաշտօնների ծանրութիւնը մի կողմից, և անծանօթ շրջաններից դրանց համար յարմարաւոր անձինք որոշելը միւս կողմից, ինչպէս երևում է, արգելք էին լինում այդ պաշտօնների վերաբերմամբ վճռական քայլեր անելու։ Խորհելու ժամանակ էր հարկաւոր։ Եւ ահա Վեհափառը սինօդում յայտնել է իր որոշումները—Վրաստանի և Իմերէթի հայոց թեմական-առաջնորդ նշանակել Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցին, Արարատեանի հայոց առաջնորդ է կարգում Գր. եպիսկոպոս Աղուանեանցին, Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր նշանակում է Եփրեմ արեղայ Սուքիասեանցին, իսկ Ղրիմի Ս. Խաչ վանքի վանահայր՝ Սահակ արեղայ Ամատունուն։ Նահապետ արեղայ Նահապետեանցին հրամայում է կրկին վերադառնալ իր պաշտօնատեղին—Կարս, և Աշոտ արեղայ Շիսեանին կարգում է Ալէքսանդրօպոլի յաջորդ։

Վանական շրջաններում խօսվում է և Գրիգոր եպ. Գառնակերեանցին Աստրախանի թեմի առաջնորդ նշանակվելու համար, սակայն այդ մասին առ այժմ դժուար է մի որոշ բան ասել, մանաւանդ՝ որ նոյն պաշտօնի համար խօսվում է և ճեմարանի ներկայ տեսուչ Սարգիս եպիսկոպոսի մասին։ Մնում էր սրտէ ցանկանալ, որ Վեհափառի վստահութեան արժանացած անձինք կարողանան իրագործել իրանց վրա դրված յոյսերը։ Այս պաշտօններից մի շատ կարևորը և պատասխանատուն Գէորգ եպիսկոպոսին է բաժին ընկել, որն այսպիսով հանդիսանում է մեր մտաւոր կենտրոնի—Թիֆլիսի ազգային-հոգևոր գործի ղեկավար։ Ցոյս ունենանք, որ նա կաշխատի Թիֆլիսի թեմի առաջնորդութիւնը դիրքին վայել բարձրութեան վրա պահել, և գործերի վրա նայել պարզ, լուսամիտ և անաչառ հայեացքով։ Չը պէտք է մոռանալ մանաւանդ, որ Թիֆլիսը ոչ Աստրախանն է, և ոչ Երևան, այլ դա մի կենտրոն է, որը կոչված է ազդեցիկ դեր խաղալու։

Այժմ համարեա ամեն օր կարելի է Վեհարանի պատերի տակ տեսնել զանազան տեղերից քահանայանալու ցանկութեամբ եկած տգէտ տիրացուներ, որոնցից շատերը նոյն իսկ սինօդի օրագրութեամբ մի տարի առաջ մերժվեցան իբրև միանգամայն անհամապատասխան քահանայական կոչման։ Սինօդի այդ խելացի վճիռը, որով մենք ազատվեցանք տգէտ քահանաների ահագին բազմութիւնից, հիմնված է եղել նոյն իսկ Խրիմեան հայրիկի քահանաների և քահանայացուների մասին շատ անգամ յայտնած գեղեցիկ մտքերի վրա։—«Արդ, դուք ով ընտանիք Հայոց... եթէ տաներէց քահանայն ձերն է, ձեր համար է և ձեր հոգևոր մշակն է... արժանաւորն ընտրեցէք, ուսեալն ընտրեցէք, հաւատարիմն ընտրեցէք, և եթէ կայ տակաւին ձեր մէջը հրեշտակակրօնն, ընտրեցէք...» (Դրախտի ընտանիք)։ Արժանաւոր, ուսեալ, հաւատարիմ, հրեշտակակրօն

կան գնի եռապատիկ, տեղ տեղ ալ քառապատիկ գինը ունի։ Քանի ճամբաները բաց էին, նորէն հեռաւոր գաւառներէն հաց կուգար, բայց երբ ճամբաները գոցուին, սովը անխուսափելի է։ Հայերը դիմումներ ըրած են պատրիարքարանին և օգնութիւն խնդրած են։ Միամիտ ժողովուրդ, որ դեռ որ և է բան կը յուսայ պատրիարքէն։ Կուսակալները վախնալով ապագայ սովէն, նոյնպէս դիմումներ ըրած են կառավարութեան՝ գալիք սովի առաջն առնելու համար։ Յարդ չը տեսնուած, չը լսուած բազմութեամբ, սովէն ու հարստահարութենէն ճողոպրելու համար, կը գաղթեն ընտանիքով բազմաթիւ հայեր Տիգրանակերտ, Տրապիզոն, այլ ծովեզրեայ քաղաքներ և Պոլիս։ Ամեն շոգենաւ, որ Տրապիզոնէն և Սամսունէն Կ. Պոլիս կուգայ, իր հետ կը բերէ շատ մը հայ ընտանիքներ։ Շատ մը պանդուխտներ ալ, որ արդէն Կ. Պոլիս կը գտնուին, տեսնելով որ չը պիտի կարենան այս սուղ տարին հարկաւոր ստակ հասցնել հացի համար, իրենց ընտանիքները Կ. Պոլիս բերել կուտան։

Անցեալ շաբթու Տրապիզոնէն եկող «Օդեսա» շոգենաւը 25—30 հայ ընտանիք բերաւ Կ. Պոլիս։ Կերասունէն յիշեալ շոգենաւը մտնող յղի կին մը շոգենաւի վրա աղջիկ մը կը ծնի։ Շոգենաւը երբ Սինոպ կը հասնի՝ աղջիկը շոգենաւին մէջ յոյն քահանայ մը կը մկրտէ, հայ քահանայ չըլլալուն համար. կնքահայրը նաւապետը կըլլայ և անունն ալ Օդիսէա կը դրուի, ի յիշատակ իր ծննդավայր «Օդէսա» շոգենաւին։ Գաղթողներու ճիշդ թիւը դեռ յայտնի չէ, բայց ցարդ ընտանիքով գաղթողներու թիւ քանի մը հարիւրէն աւելի է, մինչև հազարի կը հասնի։ Շատ արդահատելի է ասոնց վիճակը. շատերը ունեցածնին, որ մեծ բան չէ, կը ծախեն, ճամբու ծախք մը կունենան և ողբ ու լացով աչքերնին ետևնին կը պանդխտին։ Պառաւ մը տեսայ, որ կորուսած գերեզմանի վրա կուլար, որ սիրական զաւկներու քով չը պիտի թաղուի. սրտակեղեք ձայնով կաւելցուներ. «երանի մեռած ըլլայի և սիրեկաններէս չը զատուէի»։ Գաղթողները մեծաւ մասամբ Մշոյ դաշտէն, Բուլանխէն և Կարինի վայրերէն են։ Հայերու ընտանեօք գաղթականութիւնը ուրախութեամբ կը լեցնէ կառավարութիւնը, որ ամեն ճիգեր կընէ հայաբնակ գաւառները հայերէն պարպուած տեսնել։ Անցեալները մշեցի մը ինձի դառնապէս կը պատմէր իրենց կեանքը և կըսէր. «եթէ երկրի մէջ ապահովութիւն ըլլար, քիւրդերը, պաշտօնեաները, նոյն իսկ կառավարութիւնը մեզի չը հարստահարէ, չը կողոպտէ, ունեցածնիս ձեռքերնէս չը կորզէ, մենք նորէն մեզի, մեր ընտանիքը կրնայինք պահել այս սուղ տարին և մեր օրուղ չոջողը կատուի պէս բերանիս չէինք առնի և հոս Պոլիս չէինք գար»։ Պոլսի թուրք թերթերը, որոնց գրածներու և հրատարակածներու մէջ մազու մը չափ ճշմարտութիւն չը կայ, թող շարունակեն պնդել և հաւատացնել (արդէն հաւատացող չը կայ) թէ հայերու գաղթականութիւնը երկրի մէջ տիրող հացի սղութեան արդիւնք է և ոչ հարստահարութեան և երկրի անապահովութեան։

—

Անցեալ ամսուն Աշըգեանը շրջաբերական մը հանեց, որ կարդացուեցաւ Պոլսի հայոց բոլոր եկեղեցիներու մէջ։ Շրջաբերականը կը թուէր ու կը դրուատէր սուլթանի և կառավարութեան քօլերայի դէմ գործ դրած միջոցները, որոնց շնորհիւ քօլերան կարճ ժամանակի մէջ ջնջուեց Պոլսոյ մէջէն, որու համար շնորհակալութիւններ և բարեմաղթութիւններ վասն կենաց վեհափառ սուլթանի և կը հրաւիրէր հայ ժողովուրդը իր կողմէն ևս ջերմապէս աղօթել կայսեր կենաց համար։ Աշըգեանը այնչափ արթուն է, որ առիթ մը չի փախցներ հայ ազգի և իր երախտագիտական և շնորհակալութեան զգացումները արտայայտել։

Պոլսի բազմաթիւ քարոզիչ եպիսկոպոսներու և վարդապետներու վրա աւելցան և երկու նոր քարոզիչ եպիսկոպոսներ. Բարդուղիմէոս եպիսկոպոս Ջամչեան՝ Բերայի քարոզիչ, Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան՝ Սամաթիայի քարոզիչ. առաջինը Պրուսայի, երկրորդը Թէքիրդաղի նախկին առաջնորդներն են և երկու եպիսկոպոսներն ալ պատրիարքութիւն կը տենչան, որը շատ լաւ գիտէ Աշըգեան, ուստի մահը կուզէ և պատրիարքութենէն հրաժարիլ չուզեր։ Այժմ այս 3 հոգիի մէջ մեծ մրցում կայ յաչս կառավարութեան՝ զիրար գերազանցել իրենց հաւատարմութեամբ, բանիւ և գործով։ Այդ է պատճառը, որ Աշըգեան առիթ չի փախցներ իր հաւատարմութեան և երախտագիտութեան ապացոյցները կայսերական գահոյից առջև դնել։

Գում-Գաբուի եկեղեցիի քարոզիչ Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեանը, որուն իր մէկ քարոզի համար Աշըգեան ուզեց աքսորել Սիս, իբրև Սիսի թեմի եպիսկոպոս և առժամանակեայ կերպով կապաշխարէր Փրկչի հիանդանոցը, նորէն ստացաւ քարոզչի պաշտօն իր ցանկացած եկեղեցիի մէջ։ Ոստիկանութեան նախարարը անձնապէս համակրելով Մամիկոնեան եպիսկոպոսին իբրև իր վաղեմի բարեկամին, Աշըգեանին՝ Սիմոն-բէյի միջոցով պատուիրած է չեղեալ համարել իր հրամանը և եպիսկոպոսին իր նախկին պաշտօնի մէջ հաստատել, որ և Աշըգեանը ամենայն խոնարհութեամբ և ակնածութեամբ կատարեց։

Խ. Բով.

ահա թէ ինչ յատկութիւններ է պահանջում Վեհափառը քահանայացուներից, իսկ դրանցից ո՞րը այս յատկութիւններից դէթ մէկն ունի. մնում ենք զարմացած թէ այդ ողորմելիները ո՞ւմ վստահացած վազում են դէպի Էջմիածին, այն էլ այն ժամանակ, երբ վերոգրեալ հրաշալի մտքերի քարոզողը այսօր ինքն այստեղ է, միջոց ունի և անշուշտ կիրագործի այդ բոլորը:

Z.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Նոյեմբերի 10-ին

Նոյեմբերի 7-ին, կիրակի օրը, Ս. Փրկչի դրօշոցի դահլիճում կայացաւ Բարեգործական ընկերութեան Ալէքսանդրոպոլի ճիւղի ընդհանուր ժողովը: 1893—94 տարեշրջանի համար կազմած նախահաշուից երևաց, որ ընկերութիւնն ունի 40 անդամներ (!): Այդ 40 անդամների տուած 200 րուբլի անդամավճարն է միակ մուտքը, որը նախորդ տարվայ մնացորդ 636 ր. 50 կոպէկի հետ կանի 836 ր. 50 կ.: Եւ քանի ընկերութիւնը հինգ որդեգիրներին, որոնք ուսանում են տեղական ծխական դպրոցներում, տալիս է 100 րուբլի, քաղաքիս «տառապեալներին» նպաստ՝ 128 ր., բացվելիք գրադարան-ընթերցարանի համար յատկացրած ֆոնդ՝ 591 ր. 50 կ., մուտքի հինգ տոկոսը, խորհուրդին ուղարկվելիք՝ 10 ր., դիւանական ծախսեր 7 ր., ընդամենը 836 ր. 50 կոպէկ:

Թէ որքան եռանդ է ցոյց տալիս վարչութիւնը, բաւական է նայել վերև բերված պերճախօս թուերին....

Նոյեմբերի 7-ին կայացած ընդհանուր ժողովը նշանակված էր դրանից մի շաբաթ առաջ, այսինքն հոկտեմբերի 31-ին, բայց չը կայացաւ. վարչութեան անդամներից եկել էին միայն երեք հոգի, այն էլ նշանակված ժամանակից մի ժամ ուշ: Հոկտեմբերի 31-ի ժողովը զբաղվեց նրանով, որ ընդհանուր ժողովի նախագահն ու վարչութեան անդամներից մէկը վէճի բռնվեցին այն մասին, թէ ո՞վ և ո՞ւմ պարտաւորութիւնն է ընդհանուր ժողով հրաւիրելը....

Նոյեմբերի 7-ի ժողովին հին անդամների թուի վրա աւելացան 14 նոր անդամներ, բացառապէս ուսուցիչներից, որոնք իրանց աղքատիկ դրպանից 5-ական րուբլի տալով՝ քաւեցին հարուստների դատապարտելի անտարբերութիւնը:

Նախահաշուի մէջ յիշված 100 րուբլին տրված պէտք է լիներ և անցեալ 1892—93 թուի տարեշրջանում որդեգիր աշակերտներին, բայց այդ տարեշրջանում այդ գումարը չէր ծառայել իր նպատակին: Բանից դուրս եկաւ, որ վարչութիւնը իր վճիռը կայացնելուց յետոյ՝ իսկոյն մոռացել էր: Որոշվեց եկող 1893—94 տարեշրջանում գործադրել այդ գումարը:

Ապա պ. նախագահը կարդաց Հռոմ գիւղի դպրոցի հոգաբարձութեան խնդիրը, որով 350 ր. նպաստ էր խնդրում դպրոցի շինութեան համար: Որոշվեց 50 րուբլի տալ իբրև նպաստ:

Դրանից յետոյ ժողովը զբաղվեց եկող 1893—94 թուի տարեշրջանի համար ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի ընտրութեամբ: Զայների բազմութեամբ նախագահ ընտրվեց պ. Մ. Պապաջանեան, քարտուղար՝ պ. Մ. Սարգսեան: Դրանից յետոյ վարչութեան հին անդամների տեղ (պ.պ. Յ. Զիթողցեանի, Յ. Յարութիւնեանի և Ա. Խանանուշեանի) ընտրվեցին՝ պ. պ. Ս. Սահակեան, Ա. Կարապետեան (ուսուցիչներ) և Ա. Բաղդասարեան (վաճառական): Ցանկանում ենք, որ ընկերութիւնը դէթ սրանից յետոյ մի փոքր եռանդ ցոյց տայ:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, Նոյեմբերի 15-ին

Կը խնդրեմ ձեզմէ բարեհաճէք «Մշակ» լրագրի մէկ անկիւնի մէջ հրատարակել այս նամակս:

Անհաւասիկ մէկ քանի օր յառաջ «Մշակի» 6-րդ համարի մէջ պարոն Աբէլ Ապրէսեանցին ստորագրութեամբ նամակ կարդացի, որն որ տեղական պարսից հիւպատոսարանի վերաբերեալ յօդուած մը գրած էր, միայն զարմանալի է, որ նոյն պարոնը իսկական գործի որպիսութիւնն չը գիտնալով, ասպարէզ դուրս եկած է: Թէպէտ չէի ցանկանում այդպիսի նամակի մը պատասխան տալ, սակայն գործի ճշմարտութիւնն ընթերցողներին տեղեկացնելու յաղագս, բացատրելու կը պարտաւորվիմ:

Նախ՝ գրում է պ. Ապրէսեանցը, իբրև նորերս սկսած է տեղական հիւպատոսարանը, շատ խիստ կերպով հնգական բուբլի պագանջել պարսկահպատակ մշակներից, անցագրերն նորոգելու համար:

Առաջինն՝ տեղական հիւպատոսարանը ոչ թէ հիմակուց սկսած է անցագրեր փոխելու, այլ այն օրից, երբ որ Բաթումի մէջ հիւպատոսութիւնը հաստատվեց և պարսից դրօշակն պարզեցուսի այստեղի հիւպատոսարանը անհրաժեշտ պարտաւոր է կատարել պարսից կառավարութեան արտաքին գործոց նախարարի կողմանէ տրուած հրահանգներու համեմատ, և նոյնպէս ռուսաց Կովկազի գլխաւոր կուսակալի գիտութեամբ:

Ընդհանուր պարսից հպատակներն պարտական են ամենայն տարի պարսկական անցագրերն նորոգելու, չը նայելով ռուսաց կառավարութեան կողմից տրուած անցագրերուն: Մեր խօսքն պարսկա-անցագրաց վրա է, ոչ թէ ռուսաց, և պարսկա-անցագրներն ալ մէկ տարի ժամանակաւ կը տրվին, ոչ թէ միայն հայ մշակաց, այլ պարսկաց և ասորեաց: Դարձեալ իբրև հայ մշակներն սովոր են հիւպատոսարանի ապօրինի պահանջներն անտեղի կատարել, սակայն չէ բացատրում, և բացատրելու ալ հարկ չը կայ, քանի որ ապացոյց մը չունի: Կը ցաւեմ այդ հանգամանքումն. պարոն Ապրէսեանցը լոյզ թէ սխալուած լինի, որովհետև հիւպատոսարանի գործերին ծանօթ չէ: Երբէք հիւպատոսարանը այդպիսի ապօրինի պահանջներ չէ արած. և միշտ էլ պաշտպանած է ամենայն առիթների մէջ ընդհանուր պարսից հպատակներին, առանց կրօնի խտրութեան:

Սակայն պարոն Ապրէսեանցն մոռացել էր յիշելու իր նամակի մէջ տեղոյս ոստիկանապետից ինչ պատասխան ստանալն՝ անցագրերն նորոգելու մասին: Վերջապէս պարոնը յիր նամակին աւելի պայծառ հաստատուն ապացոյց մը տալու համար, տեղական Ռուչիլոի կառավարչի անունն էլ կը իշէ, իբրև նա էլ իր կողմից չէ խնայել օգնութիւնը, կառավարչութեանը դիմելու: Թէ որ պարոն Ապրէսեանցը փոքր ինչ խոհեմութեամբ և համբերութեամբ մտածելու լինէր, հարկաւ այն ժամանակն կարծիք չը կար գիտնալու, որ տեղական հիւպատոսարանը առանց ռուսաց և պարսից կառավարութեան գիտութեան ոչինչ չէ կարող կատարել և ոչ էլ կարող է իւր ստացած հրահանգներից դուրս գալ:

Փոխ-հիւպատոս պարսից՝ Տիգ. Վանցեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որպէս յայտնի է, վերջին ժամանակներս Թիւրքաց Հայաստանից բազմաթիւ ընտանիքներ են գաղթում դէպի Անդրկովկասի սահմանները: Ցանկալի է, որ զգուշացնեն գաղթականներին, որպէս զի նրանք իզուր տեղը սահմանը չանցնեն, որովհետև մեր կառավարութիւնը թոյլ չէ տալիս գաղթականներին բնակութիւն հաստատել այս կողմերում և ստիպում է նորից վերադառնալ:

—

Վաղը, կիրակի, Նոյեմբերի 21-ին, պէտք է քաղաքային վարչութեան անդամների ընտրութիւն լինի: Վարչութեան անդամի պաշտօնի համար մի քանի նոր թեկնածուներ կան, իսկ քաղաքային դումայի քարտուղարի ընտրութիւնը տեղի կունենայ մօտաւորապէս երկու կամ երեք շաբաթից յետոյ:

—

Ինչպէս յայտնի է, Կարսի Նահանգում տեղի ունեցած գործերում մեղադրվող Սարգիս Կուկունեանի և իր ընկերների մասին դատաստանական պալատի վճռի դէմ՝ մեղադրվողները բողոք էին ուղարկել Պետերբուրգ, կառավարիչ սենատին: Պետերբուրգից հաղորդում են, որ այդ բողոքի քննութիւնը, որ տեղի պիտի ունենար հոկտեմբերի 26-ին, յետաձգված է: Մեղադրվող Կուկունեան և իր ընկերները, Կարսից այժմ տեղափոխվել են Թիֆլիսի նահանգական բանտը:

—

Մեզ գրում են ԷՋՄԻԱԾՆԻՑ հետևեալը. «Լսեցինք, որ Աշրգեան պատրիարքը Վեհափառ Կաթողիկոսի օծումը ոչ մի բառով չէ հնորհաւորել: Օծումից շատ յետոյ միայն՝ Աշրգեանից ստացվել է մի հնորհաւորական նամակ: Ինչպէս երևում է հեռագիր խփելը պատրիարքի քաջութիւնից շատ վեր է»:

—

Լսում ենք, որ «Աղբիւր-Տարազ» և «Анонсъ» թերթերի հրատարակիչ պ. Տիգրան Նազարեան, որ հրատարակում էր այդ թերթերը, այս դեկտեմբերից նորից պէտք է ստանձնի իր հրատարակութիւնների խմբագրութիւնը:

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ մտադրութիւն կայ հիմնել Շուշում ռուսաց Մարիամեան իգական դպրոց: Այդպիսի մի դպրոց, կաւելացնենք մենք, արդէն կայ Շուշում: Գուցէ մտադրութիւն կայ նոյն դպրոցը պրոգիմնազիա դարձնել:

—

«Тифл. Листокъ» լրագիրը հաղորդում է, որ քաղաքի հաշուով պահվող դպրոցներում, որպէս զի տեղացի աշակերտները աւելի շուտով և լաւ իւրացնեն ռուսաց լեզուն, ուսումնարանական իշխանութիւնը առաջարկել է ուսուցիչներին, որ նրանք պահանջեն, որ տեղական լեզուի իւրաքանչիւր դասը աշակերտները գիտենան ոչ միայն իրանց մայրենի լեզուով, բայց և կարողանան բացատրել ռուսաց լեզուով: Այդ կանոնը շուտով կը տարածվի և հայոց ծխական դպրոցների վրա: Մի և նոյն ժամանակ տեղացի ուսուցիչներին առաջարկված է «անցած նիւթի» գրքի մէջ մտցնել տեղական լեզուով տրված դասի բովանդակութիւնը:

—

Պ. Յ. Պարոնեան, Եւպատորիայից խնդրում է մեզ իր ուղարկած 10 բուբլուց դուրս գալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների վճարը, և մնացած 8 ր. թողնում է մեր խմբագրութեան տրամադրութեան ներքոյ:

—

Իգական կրթութեան վերակազմութեան նախագիծը, որպէս հաղորդում է «Гражданинъ» լրագիրը, կառաջարկվի պետական խորհրդին այս ամսվայ վերջում:

—

Ստացանք Բօստովից, 1) Օրացոյց 1894 թուականի, որ կազմել է Յ. Տէր-Աբրահամեան, գինը 20 կոպէկ: Օրացոյցին կցած է Վեհափառ Կաթողիկոսի գեղեցիկ պատկերը, և 2) Թիֆլիսում տպած «Ծոցի օրացոյց», որ կազմել է Մ. Զմբչկեան, գինը 15 կոպէկ: Սրան էլ կցած է Վեհափառ Կաթողիկոսի պատկերը, բայց վերին աստիճանի անշնորհ կերպով պատրաստած:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ հաղորդում են. «Նոյեմբերի 12-ին նահանգական դատարանի քրէական բաժնում քննվում էր Տաշլանդշլաղու հասարակութեան վերին աստիճանի հետաքրքիր գործը, որով մեղադրվում էին 22 անձինք պրիստաւին պաշտօնավարութեան ժամանակ զէնքով դիմադրելու և խռովութիւն յարուցանելու մէջ: Այս գործի պատճառով $2^1/_2$ ամիս էկզեկուցիա դրվեցաւ այդ հասարակութեան վրա. իսկ պաշտօնական անձինք, բոլորն էլ ռոճիկներով, նշանակվեցին կառավարութեան կողմից: Մեղադրեալներին պաշտպանում էր երդվեալ հաւատարմատար ի. Մելիք-Աղամալով: Դատարանը 20 հոգի արդարացրեց, իսկ 2-ին մեղաւոր ճանաչեց և մի մի տարի բանտարկութիւն նշանակեց»:

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Մի սարսափելի սպանութիւն տեղի ունեցաւ Նոյեմբերի 9-ին: Այդ դիշեր, ժամը 12—2-ին տեղիս մայր եկեղեցու երկու ռուս պահապաններ, եկեղեցին կողոպտելու նպատակով, հայ ժամկոչին՝ քնած ժամանակ կացնի հարուածներով ամենաանխիղճ կերպով սպանում են և մտնում եկեղեցի: Սակայն բացի քահանաներէ զանձարանից վերցրած 600 րուբլուց ոչինչ չեն տանում. բանկային տոմսերին և եկեղեցու զարդարանքներին ձեռք չը տալով՝ անմիջապէս անյայտանում են և մինչև օրս, չը նայած ձեռք առած միջոցներին, ոչ մէկի հետքը չէ գտնվել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

«Nouvelle Revue» ամսագրում տպված է Ամմէդ-բէյի մի հետաքրքիր յօդուածը Պարսկաստանի հետ ռուսների և անգլիացիների ունեցած յարաբերութիւնների մասին: Հեղինակը քիչ ծանօթ է երևում գործերի դրութեան հետ, մասնաւորապէս Ռուսաստանի և Անգլիայի մէջ եղած մրցման պատմական զարգացման վրա Արևմտեան Ասիայում և աշխատում է վճռել այն հարցը, թէ այդ երկու ազգերից ո՞րը աւելի հիմունքներ ունի յուսալու իր քաղաքականութեան յաղթութեան վրա Պարսկաստանում:

«Պարսկաստանի ազգաբնակութեան մէջ, ասում է նա, երկու տիպ պէտք որոշել՝ հարաւային, որ կազմվել է սեմիտական ցեղի ազդեցութեան տակ, և հիւսիսային՝ տուրանեան: Հարաւային պարսիկները ամենևին չունեն պատերազմական հակումներ. նրանք փոքրահասակ են և թուլամարմին, սիրում են հանգիստ կեանք, բանաստեղծութիւն, փիլիսոփայութիւն: Հիւսիսայինները, ընդհակառակն, աւելի կոշտ-կոպիտ են. դրանք բարձրահասակ են, զօրեղ, վատ մտածողներ, սակայն լաւ զինուորներ են: Բայց թէ առաջինները և թէ վերջինները միատեսակ դժգոհ են այժմեան կառավարութիւնից և յօժարութեամբ կօգնէին մի օտար ոյժին, ում և լիներ այդ ոյժը, միայն թէ ազատէր իրանց այն ծանր և աղքատացնող ըէժիմից, որը տարուց տարի բարձրաձայն դժգոհութեան առիթ է տալիս: Հարաւային Պարսկաստանի ընակիչները, որոնք աշխարհագրապէս մօտ են անգլիացիներին, երազում են անգլիական հովանաւորութեան մասին: Հիւսիսային պարսիկները մշտական յարաբերութիւններ ունենալով Ռուսաստանի հետ, ռուսաց հովանաւորութիւնն են կամենում: Առաջինները, իրանց հայրենիքի սահմաններից դուրս գալով, սովորաբար աւելացնում են իրանց անունը անգլիական «master» տիտղոսը. երկրորդները—ռուսաց «овъ» վերջաւորութիւնը: Մինչև անգամ Թիւրքիայում նրանք հովանաւորութիւն են որոնում երբեմն անգլիական դեսպանատանը, երբեմն ռուսաց դեսպանատանը, լաւ գիտենալով, որ իրանց՝ պարսկական դեսպանատան մէջ բացի ծեծից, ուրիշ ոչինչ չեն գտնի:

«Ռուսաստանի առաջին անվիճելի առաւելութիւնը Անգլիայի վրա Պարսկաստանի հէնց այդպիսի մի բաժանումն է, երկու հակառակ բանակներ կազմելն է: Ռուսաստանի կողմնակիցները ոչ միայն աւելի հարուստ ու աւելի եռանդոտ են, բայց և բազմաթիւ են. նրանք երեք քառորդ մասն են կազմում Պարսկաստանի ամբողջ ազգաբնակութեան: Այդ յարաբերութիւնը կարող է փոխվել միայն այն դէպքում, երբ անգլիացիներին աջողվի տիրել Աւգանստանը:

«Ռուսաստանի մի ուրիշ նշանաւոր և անվիճելի առաւելութիւնը, որ գերակշռութիւն է տալիս նրան ոչ միայն Անգլիայի, այլ և բոլոր ուրիշ ազգերի վրա, դա ռուսաց «մուժիկի» ազդեցութիւնն է: Անգլիացիներից պարսիկները ճանաչում են միայն զինուորներին և վաճառականներին, դէպի որոնց հասարակական կարծիքը չէ կարելի ասել թէ շատ էլ նպաստաւոր լիներ, այն ինչ Ռուսաստանը ամեն տեղ իր հետ է բերում իր ռամիկ—երկրագործներին, որոնք շատ գեղեցիկ «եօլլա» են գնում տեղացիների հետ և շուտով գրաւում են նրանց բարեկամութիւնը:

«Պարսկաստանի ժողովրդի երկու հակառակ բանակներ կազմելը ազդում է և կառավարող չրջանների գործունէութեան եղանակի վրա: Շահը և նրա մերձաւոր անձերը, նոյնպէս և հարաւային խոշոր առևտրականները հակվում են Անգլիայի կողմը,—նախ այն պատճառով, որ Անգլիան հեռու է և, ուրեմն չէ կարող անմիջապէս ձեռք դնել Պարսկաստանի վրա և երկրորդ՝ այն պատճառով, որ այդ բոլոր մարդիկ անգլիական բանկերի ակցիոնէրներ են, որոնք լաւ դիվիդենդներ են վճարում նրանց, և հարկաւոր ժամանակ, արդիւնաւէտ փոխառութիւններ են տարքում: Բայց նահանգապետները, օֆիցէրները և հիւսիսային վաճառականները անպայման Ռուսաստանի կողմն են: Շատ նշանաւոր պարսիկներ ռուսաց ծառայութեան մէջ են գտնվում. ռուսական չափերը և կշիռը և ռուսաց թղթադրամը ազատ շրջաբերութիւն ունեն համարեա ամբողջ Պարսկաստանում:

«Այդպիսով Ամմէդ-բէյ այն եզրակացութեան է գալիս, որ Պարսկաստանի ազգաբնակութեան առաւել հարուստ և գործունեայ մասը յայտնի կերպով թշնամի է անգլիացիներին, իսկ բարեկամաբար է տրամադրված դէպի Ռուսաստանը: Գործերի այդպիսի դրութեան հետևանքները անյապաղ կերևան, հէնց որ կը մեռնի այժմեան Նասր-էդին շահը: Բանն այն է, որ նա հրաժարեցրեց գահաժառանգութիւնից իր անդրանիկ որդի Զիլ-օլ-Սուլթանին, որպէս ոչ նշանաւոր ծագումի կնոջից ծնվածին, և թագաժառանգ հրատարակեց իր երկրորդ որդուն՝ Մօզաֆար-էդ-

դինին։ Սակայն Զիլ-օլ-Սուլթանը ամենևին չէ ցանկանում հաշտվել իր դրութեան հետ, իրան վիրաւորված համարելով, և անկասկած ապստամբութիւն կը յարուցանի իր եղբօր դէմ, հէնց որ նա գահը կը բարձրանայ։ Պարսկաստանի և Ռուսաստանի մէջ կապված Դիւլիստանեան դաշնագրի համաձայն, պարսկական գահի ժառանգը պաշտօնապէս պէտք է ընդունվի ռուսաց կառավարութեան կողմից։ Այստեղից ուրեմն հետևում է, որ Ռուսաստանը պարտաւորված կը լինի պաշտպանելու իր ճանաչած Մօզաֆար-Էդդինի իրաւունքները—հետևաբար մի ջամտել Պարսկաստանի ներքին գործերում և հաստատել իր հովանաւորութիւնը։ Անգլիան, իր կողմից, կը սկսի պաշտպանել միւս թագաժառանգին։ Կռուի հետևանքը անկասկած բարեյաջող կը լինի Ռուսաստանի համար։ Զը խօսելով արդէն այն բանի մասին, որ Ռուսաստանը մի շատ զօրեղ կուսակցութիւն ունի Պարսկաստանում, նա կարող է 24 ժամվայ ընթացքում գրաւել իր զօրքերով Թաւրիզը, իսկ երկու օրվայ ընթացքում—Մէշհէդը և Թէհրանը, այսինքն պարսկական երեք ամենանշանաւոր քաղաքները։ Իսկ անգլիացիները ստիպված կը լինէին կամ Բէլուջիստանի ահագին անապատներն անցնել, կամ Կարաուն գետի (որը պարսից ծոցն է թափվում) ափը իջնել։ Թէ այդ և թէ միւսը խիստ շատ ժամանակ կը պահանջէր, որի ընթացքում Ռուսաստանը կատարեալ հնարաւորութիւն ունի ամրանալ Պարսկաստանում։

Ահմէդ-բէյ վերջացնում է իր յօդուածը՝ մատնացոյց անելով պարսկական ազգայնութեան կենսականութեան վրա և այն համոզմունքն է յայտնում, որ ապագայում, երբ մահմեդական ժողովուրդները աւելի սերտ կերպով կը մօտենան միմեանց, եւրոպական նուաճումների և արևմտեան քաղաքակրթութեան ազդեցութեան տակ,—Պարսկաստանը մահմեդական աշխարհի վերածնութեան գլուխ կը կանգնի և նոյնպիսի դեր կը խաղայ այնտեղ, որպիսի դեր վիճակվեց Ֆրանսիային Եւրոպայում։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից «Ind. Belge» լրագրին հեռագրում են հետևեալը. «Քաղաքական շրջաններում խօսակցութեան առարկայ է կենտրոնի կուսակցութեան առաջարկութիւնը, որի նպատակն է վերադարձնել եղուխներին Գերմանիա։ Ներկայումս այդ նախագծի վիճակը՝ դեռ ևս պարզված չէ։ Անկասկած յօդուտ այդ նախագծի ձայն կը տան կենտրոնի կուսակցութիւնը, լեհացիները և սոցիալիստները, այսինքն մօտաւորապէս 103 ձայն։ Մինչև այժմ կանցլէր Կապրիվիի դիտաւորութիւնների մասին դեռ ևս ոչինչ յայտնի չէ։ Կարծում են, որ կոմս Կապրիվի, եթէ մինչև անգամ դիմադրի էլ եղուխների վերադարձի հարցին, բայց իր կարծիքը այնպէս մեղմ կը յայտնի, որպէս զի չը բարկացնէ կաթոլիկներին։»

—Եւրոպայի հիւսիս-արևմտեան ամբողջ ծովափը ներկայումս սարսափելի փոթորիկների է ենթակայ։ Փոթորիկները լամանշում կորել են հեռագրական և տելեֆոնային հաղորդակցութիւնը Անգլիայի և Ֆրանսիայի մէջ։ Դժբաղդ դէպքերը ծովի վրա այնքան յաճախ և բազմաթիւ են, որ հնարաւորութիւն չը կայ մի առ մի յիշել նրանց։ Ծովագնացներն ասում են, թէ 50 տարուց աւելի է, որ այսպիսի սարսափելի փոթորիկներ չեն եղել Ֆրանսիայի և Մեծն-Բրիտանիայի ափերում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Արձագանքի» խմբագիր, պ. Աբգար Յովհաննիսեան, որը քանի տարի է ահա իր ամբողջ ուղեղը մաշել է բանկերում՝ օբլիգացիաների և ակցիաների վրա, իր մահամերձ օրգանի 134 համարում, իդեալիստի դիմակը հագած, բացականչում է. «իդեալ և օբլիգացիա.—ինչպէս սաղում են այս բառերը միմեանց»։

Ճիշդ որ՝ унтеръ-офицерша сама себя высѣкла.

* * *

Ամբողջ գիտական աշխարհը նոյեմբերի 24-ին կը տօնի հռչակաւոր լեզուագէտ և Օքսֆորդի համալսարանի պրոֆէսօր Մակս-Միւլլերի 70 ամեակը։ Մակս-Միւլլէր ռուս համալսարանների (բացի Վարշավայի) պատուաւոր անդամ և գիտութիւնների ակադէմիայի անդամ-թղթակից է։ Պրոֆէսօրի ահագին ծառայութիւնները պատմական լեզուագիտական գիտութիւնների շրջանում վաղուց արդէն առաջնակարգ տեղ են տուել նրան ամբողջ աշխարհի գիտնական հումանիստների շրջանում, իսկ նրա գեղեցիկ և հասկանալի լեզուն յայտնի է դարձրել նրան անգլիական կարդացող դասի ստոր շրջաններում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԴՈՒԲԼԻՆ, 17 նոյեմբերի։ Դինամիտային երկու ռումբեր են գտնված։ Կալանաւորված է գրաշար Շերիդան, որի մօտ գտել են պայթող նիւթեր։ Որմնադիր Բէյդ, Շերիդանի ընկերը, փողոցի վրա գտնակահար է գտնված։ Կալանաւորված է խանութպան Միրս, որը կասկածվում է Բէյդի սպանութեան մէջ։

ԲԵՐԼԻՆ, 17 նոյեմբերի։ Կանցլէր Կապրիվիին դժոխային մեքենայ ուղարկված է մի նամակով, որի մէջ ասված է թէ առանձին յատկութիւն ունեցող բողկի սերմեր են ուղարկվում։

ՖԼԷՆՍԲՈՒՐԳ, 17 նոյեմբերի։ Նաւահանգստում պատնէշի $1/3$ մասը և փողոցի մի մասը քանդվեցին։ Կործանումը շարունակվում է. վնասները ահագին են։

ԼՕՆԴՕՆ, 17 նոյեմբերի։ Դլադստոն յայտարարեց, որ Միջերկրական ծովում նաւահանգիստ ձեռք բերելու համար Ռուսաստանի արած քայլերի մասին տեղեկութիւններ չը կան։ Ռուսական նաւատորմին անցաւ Դարդանէլի միջով մի ուրիշ նաւատորմին փոխարինելու համար, որ յաճախ պատահում է։ Եթէ մի որ և է ազգին անցնելու արտօնութիւն կը տրվի, նոյնպիսի արտօնութիւն կը պահանջի և Անգլիան։

ՊԱՐԻԶ, 18 նոյեմբերի։ Ժողոված տեղեկութիւնների հիման վրա կարծում են, որ Կապրիվիին դժոխային մեքենայ ուղարկել են գերմանացիները։

ԲԵՐԼԻՆ, 18 նոյեմբերի։ Եթէ բանակցութիւնների շնորհով կը վերացվին դժուարութիւնները՝ մի քանի անշան վիճելի կէտերի վերաբերմամբ, այն ժամանակ ռուս-գերմանական դաշնագիրը կընդունվի ըէյխստագում, որովհետև կենտրոնի կուսակցութեան մէջ, որը վճռողական նշանակութիւն ունի, այդ դաշնագրի բաւական շատ կողմնակիցներ կան։

ՀՌՕՄ, 18 նոյեմբերի։ Բանակցութիւններին նայելով, շուտով կը կազմակերպվի մինիստրութիւնը պատգամաւորների ժողովի նախագահի գլխաւորութեամբ։

ՊԱՐԻԶ, 18 նոյեմբերի։ Սպիւլլէր ընդունեց նոր մինիստրութիւն կազմելու առաջարկութիւնը։—Մարսէլից հեռագրում են, որ ստորերկրեայ մի տեղում գտել են անարխիական զէնքեր և երեք հոգի կալանաւորել են։

ՎԻԵՆՆԱ, 19 նոյեմբերի։ Պատգամաւորների ժողովի յանձնաժողովը ընդունեց Պրագայում աւելի խիստ հսկողութիւն նշանակելու նախագիծը։

ՊԱՐԻԶ, 19 նոյեմբերի։ Սպասում են, որ Կազիմիր Պերիէ է մինիստրների խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստր կը լինի։ Բուրժուայից հաղորդում են, որ այնտեղ ձերբակալված են երկու գերմանացի, որոնց մասին կասկած կայ, թէ պատկանում են անարխիստների կուսակցութեան։

ՀՌՕՄ, 19 նոյեմբերի։ Մինիստրական ճգնաժամի մասին առ այժմ որոշ ոչինչ չը կայ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1894 թ. ՕՐԱՑՈՅՑ
Նոր արդարամիտ յաւելուածով.
Լրագրատեսակ յաւելուածով.
Հարց 20 կոպեկ։ 10-ով առնողին—17 կ., 100-ով առնողին—15 կ.։ 100-ով առնողը չունենալով հաճախորդներ չէ կարում։
Գիմել՝ Тифлисъ. Священнику Эммануелу Назарянцъ.
(ե.) 1—4

Նոր տեսակ.
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
ԳՐԵՑ ՀԱՄԱՐԶՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ
Գինն է 20 կոպ.
Վաճառվում է թիֆլիսի բոլոր գրավաճառներում։ 1—5

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (Հոգեբանական հարց).
Գինը 50 կոպեկ (փոստի ծախսով)
Ծախվում է „Մշակի“ խմբագրատան, Գ. Մարտիրոսեանի գրավաճառանոցում և գրավաճառների մոտ։
Գանգրենայի ցաւերի դեղերի ցուցակներ գտնվում են գրավաճառների մոտ։
(№ 126) 22—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հոգևորականներին և աշխարհականներին, որ նոյեմբերի 21-ին, ամենայն սրբոց տօնի հետևեալ օրը, կիրակի, Ս. Պետարագից յետոյ, կատարվելու է հոգեհանգիստ պաշտաման կարգ գանձարանիս նուիրաբերողների յիշատակի համար և կարդացվելու է ընծայաբերողների ցուցակը։
Նախագահ վարչութեան՝ Գ. քահանայ Տէր-Բարսեղեան.
1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Հայկական ներկայացումն. Բաժանորդագրութիւն իր դուրս.
Երկուշաբթի, նոյեմբերի 22-ին, հայ դերասանական մշակական խումբը, բարեհաճ մասնակցութեամբ պ. Բէգեանցի, առաջին անգամ կը ներկայացնէ
Ի ՆՊԱՍՏ ՕՐ. ՎԱՐԴՈՒՀՈՒ
„ԽԱՆՈՒՄ“
Կամ. 3 գործ. 4 պատ., հեղ. Յ. Ցագարելու, թարգմ. Արաքսեանի։ Խանումի դերը կը կատարէ օր Վարդուհին։
Սկիզբն է ճիշդ $7^1/_2$ ժամին երեկոյեան։
Ա զդ. Շուտով լինելու է պ. Աբելեանի բենեֆիսը։ 1—1

ОТЪ КОНТОРЫ РЕДАКЦІИ
„ЭНЦИКЛОПЕДИЧЕСКАГО СЛОВАРЯ“
БРОКГАУЗА и ЕФРОНА

Для облегченія подписки на „Словарь“, въ виду поступающихъ многочисленныхъ заявленій объ обременительности единовременной уплаты за вышедшіе полутомы. *контрой нынѣ установлены нижеслѣдующія условія разсрочки:*

1) Вышедшіе до сихъ поръ полутомы (числомъ 20) высылаются подписчикамъ *единовременно*, при чемъ уплачивается *задатокъ* въ размѣрѣ отъ 10 руб.; 2) Остальная сумма (50 руб. и за пересылку 8 руб., всего 58 руб.) погашается взносами въ размѣрѣ **$1^1/_2$ руб. въ мѣсяцъ**: 3) Слѣдующіе имѣющіе выходить полутомы высылаются на общихъ основаніяхъ—съ наложнымъ платежемъ въ 3 руб. 40 к. на каждый полутомъ, по мѣрѣ выхода.

За подробными справками и съ подпиской на изложенныхъ основаніяхъ обращаться **къ представителю конторы „Словаря“ для Кавказскаго края**

В. Г. КРАСНЯНСКОМУ

въ Тифлисѣ, Михайловская ул., д. № 153, а также въ центральную книжную торговлю и въ книжный магазинъ Хиддекеля. **Иногородные благоволятъ обращаться исключительно къ Б. Г. КРАСНЯНСКОМУ въ Тифлисѣ.**

„ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ“ (начатый проф. И. К. Андреевскимъ) подъ редакціей К. К. Арсеньева и заслуженнаго проф. Ѳ. Ѳ. Петрушевскаго. При участіи редакторовъ отдѣловъ: Проф. А. Н. Бекетовъ (біологич. науки), С. А. Венгеровъ (исторія литературы), Проф. А. Н. Воейковъ (географія), Проф. Н. И. Карѣевъ (исторія), Проф. Д. И. Менделѣевъ (химико-технич. и фабрично-завод.), Проф. В. Т. Собичевскій (сельско-хозяйственный и лѣсоводство), Владиміръ Соловьевъ (философ), проф. Н. Ѳ. Соловьевъ (музыка).

„ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ“ выходитъ каждые 2 мѣсяца полутомами въ 30 листовъ убористой печати. Въ настоящее время вышло **двадцать** полутомовъ.

Цѣна за каждый полутомъ безъ пересылки въ переплетѣ 3 руб., безъ переплета 2 руб. 70 коп. За пересылку 40 коп. на каждый полутомъ. Переплеты изъ шагреневой кожи съ золотымъ тисненіемъ на переплетѣ. Книгъ высылаются по почтѣ съ наложнымъ платежемъ.

Издатели: **А. Ф. БРОКГАУЗЪ** (Лейпцигъ). **И. А. ЕФРОНЪ** (С.-Петербургъ).
(г.) 1—3

1894 թ. փետրվարի 1-ից, ՄԱՐԻԱՄԵԱՆ ՅՕՎՆԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հոգաբարձական խորհուրդը կապալով է տալու Անանեան քարվանսարան։ Յանկացողները դիմելու են քարվանսարայի կառավարչին։ Աճուրդի օրվայ մասին կը լինի առանձին յայտարարութիւն։
(20, 27) 2—3

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ, ՄՈՍԿՎԱ
Ճեմարանի վարչութիւնը ունի վաճառելու
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ
Հետևեալ սակաւաթիւ հեղինակութիւններն ու հրատարակութիւնները.

1) Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, ա. տ. 2 ր. 50 կ.
2) Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, 1861 ա. տ. 3 » —
3) Մխիթարայ Այրեվանեցւոյ Պատմութիւն Հայոց, 1860, ա. տ. . . . 1 » —
4) Всеобщая Исторія Вардана Великаго (XIII в.), переводъ съ армянскаго, съ объясненіями и приложеніями, 1861. . . . . 4 „ —
5) Всеобщая Исторія Степаноса Таронскаго Асохика по прозванію (XI в.) пер. съ армянскаго, съ объясненіями и приложеніями, 1864. . . . 4 „ —
6) Синодальное слово Нерсеса Ламбронскаго (XII в.), пер. съ арм. 1864. 2 „ —
7) Шараканъ (*Շարական*) богослужебные каноны и пѣсни армянской Восточной Церкви. Полный переводъ. 1879 (*Միայն մի քանի օրինակ*) 6 „ —
8) Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и переводъ 1881. . . . . 1 „ 50
9) Очеркъ Исторіи Армянской Восточной Церкви, 1864 . . . — „ 65
10) Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдованіе) 1864. . . 1 „ 50
11) Отвѣтъ на замѣчаніи г. Патканова, 1874 . . . . — „ 65
12) Моисей Хоренскій и древный эпосъ армянскій (изслѣдованіе) 1881. 1 „ —
13) Династическій списокъ Хайкидовъ (изслѣдованіе)
14) Сказаніе о Романѣ и Давидѣ (Борисеѣ и Глѣбѣ) по Арм. Четои-Минеямъ (пер. съ армянскаго). . . . . — „ 75
15) Сказаніи о Свв. Ѳаддѣѣ и Варѳоломеѣ апостолахъ Арменіи (пер. съ армянскаго) . . . . . — „ 75

Գրքերի գները նշված են ճանապարհածախսով հանդերձ։—Այս գրքերից գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել իրանց պատուէրներով Ճեմարանի վարչութեան այդպիսի հասցէով.

Въ Правленіе Лазаревскаго Института восточныхъ языковъ (Москва).

Նոյն տեղում վաճառվում է նոր լոյս տեսած
„ИСТОРІЯ АРМЕНІИ МОИСЕЯ ХОРЕНСКАГО“
Новый переводъ М. Эмина (съ примѣчаніями и приложеніями), Москва, 1893.—Цѣна 2 р., съ пересылкою 2 р. 25 к. (г) 1—4

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Ноября 1893 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.